

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գոհար Գավրուշի Սարգսյանի Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում (Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Գոհար Սարգսյանի ատենախոսությունը նվիրված է Արցախի Հանրապետությունում գործող կազմակերպություններում իրացվելիության ֆինանսական հիմնախնդիրների գիտական հետազոտության և բարելավման ուղիների վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը: Շուկայական տնտեսության պայմաններում ֆինանսատնտեսական գործունեության առանցքային բնութագրեր են համարվում իրացվելիությունն ու վճարունակությունը: Ցանկացած գործարարություն նույն ոլորտի այլ կազմակերպությունների առջև կունենա առավելություն, եթե այն իրացվելի է և վճարունակ: Այս առումով, չափազանց կարևորվում է իրացվելիության ֆինանսական արդյունավետ կառավարման գործիքակազմի կիրառումը, որի շրջանակներում, տնտեսության իրական հատվածում գործող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների հիման վրա, իրականացվում են իրացվելիության և վճարունակության այլընտրանքային գնահատումներ: Առանձնակի ուշադրություն են պահանջում նաև կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավումները՝ հիմնված ակտիվների շրջանառելիության, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի օպտիմալացման, ֆինանսաարտադրական լծակի արդյունավետ գործածության համադրմամբ:

Հետազոտվող սննդի արտադրության կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը ներկայումս փաստացի գործում են Արցախում՝ բնակչությանը ապահովելով կենսական անհրաժեշտ արտադրանքով, ինչը խոսում է թեմայի կարևորության մասին, իսկ նշված հիմնախնդիրների լուծմանն ուղղված Գոհար Գավրուշի Սարգսյանի ատենախոսության արդիական է ու անհրաժեշտ:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները

Ճետազոտության նպատակը հեղինակի ներկայացմամբ՝ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների ներկայացումն է, որոնք կնպաստեն ոլորտում ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացմանը: Նպատակի իրականացման համար ատենախոսությունում հեղինակն առաջադրել և փորձել է լուծել հետևյալ **խնդիրները**.

➤ կատարել սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծություն, և բացահայտել ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները,

➤ ելնելով տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների գործունեության ֆինանսատնտեսական առանձնահատկություններից՝ առաջարկել իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբանական մոտեցումներ,

➤ ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտել շահութաբերության և իրացվելիության մակարդակների հակակշռման կառավարելիության աստիճանը,

➤ մշակել կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման ֆինանսական կառավարման համակարգ,

➤ գործոնային գնահատումների միջոցով ներկայացնել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակների հավասարակշռման կառավարման մեխանիզմ,

➤ ռեգրեսիոն վերլուծության միջոցով բացահայտել իրացվելիությունն ու գործարար ակտիվությունը բնութագրող ցուցանիշների միջև եղած հնարավոր սերտ կապերը,

➤ իրացվելիության պաշարի ապահովվածության տեսանկյունից մշակել տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում ֆինանսական ռիսկերի կանխարգելման կառավարման մեխանիզմ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը շարադրված է 169 էջի վրա /առանց հավելվածների/ բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունների բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական և մեթոդական, տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ **«Իրացվելիության ֆինանսական կառավարման տեսական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել և ներկայացվել են «իրացվելիություն» և «վճարունակություն» եզրույթների վերաբերյալ տարբեր մոտեցումները, բացահայտվել է իրացվելիության տնտեսական բովանդակությունը, ներկայացվել են կազմակերպության վճարունակության և իրացվելիության գնահատման հիմնական բացարձակ և հարաբերական ցուցանիշները, ակտիվների և պասիվների դասակարգման, ինչպես նաև հաշվեկշռի իրացվելիությունը որոշելու համար կիրառվող տարբեր մոտեցումները: Այնուհետև անդրադարձ է կատարվել կազմակերպության իրացվելիության և վճարունակության կառավարման մեթոդներին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Իրացվելիության ֆինանսական կառավարման գնահատականը տնտեսության իրական հարվածի կազմակերպություններում /ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով/»** գլխում կատարվել է ԱՀ սննդի արտադրության ոլորտի կազմակերպությունների վիճակի ընդհանուր գնահատում: Հեղինակի կողմից իրականացվել է ԱՀ արդյունաբերության /մասնավորապես՝ սննդի արտադրության/ ոլորտի առևտրային կազմակերպությունների գործունեությունը բնութագրող որոշ հիմնական ցուցանիշների դինամիկայի վերլուծություն, ուսումնասիրվել և ներկայացվել է ԱՀ արդյունաբերական ոլորտի, իսկ այնուհետև՝ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական արդյունքները բնութագրող ցուցանիշների դինամիկան, իրականացվել է Արցախում գործող կազմակերպությունների ակտիվների և պասիվների դինամիկայի ուսումնասիրություն, գնահատվել է ԱՀ սննդի արտադրության որոշ կազմակերպությունների ընթացիկ և հեռանկառային իրացվելիությունը՝ բացարձակ մեծությամբ, որից հետո, ֆինանսական գործակիցների օգնությամբ իրականացվել է իրացվելիության մանրամասն վերլուծություն:

Ատենախոսության երրորդ՝ **«Կազմակերպության իրացվելիության կառավարման արդի հիմնախնդիրները և բարելավման հեռանկարները /ԱՀ սննդի արտադրության**

կազմակերպությունների նյութերով/» գլխում ուսումնասիրվել է կազմակերպության իրացվելիության գնահատման ցուցանիշների գործող համակարգը և տրվել ֆինանսական կառավարման գնահատականը, ներկայացվել են շահութաբերության ցուցանիշները և իրականացվել է ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների շահութաբերության ամփոփ ցուցանիշների հաշվարկը: Ֆինանսական պարբերաշրջանի, շահութաբերության և իրացվելիության ցուցանիշների կապը բացահայտելու նպատակով՝ ԱՀ սննդի արտադրության կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կազմվել են ռեգրեսիոն մոդելներ:

Ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում ամփոփվել և համառոտ ներկայացվել են հետազոտության վերաբերյալ հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել Արցախի Հանրապետության տնտեսության իրական հատվածը՝ իրեն հատուկ գործառույթների ոլորտով, իսկ **առարկան**՝ Արցախի Հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության կառավարման շրջանակն է:

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել կազմակերպությունների իրացվելիության կառավարման հայրենական և արտասահմանյան հետազոտողների աշխատությունները, գիտական հրատարակումները, աշխատանքային փաստաթղթերը, միկրոտնտեսական վերլուծությունները: Ատենախոսությունում օգտագործվել են սննդի արդյունաբերության ոլորտի զարգացմանը վերաբերող հաշվետվական տվյալներ, Արցախի Հանրապետության վիճակագրական և ուսումնասիրվող բնագավառին առնչվող այլ նյութեր:

Հետազոտության մեջ կիրառվել են գիտական և փորձագիտական վերլուծության մեթոդներ ու եղանակներ: Հետազոտության արդյունքները, կատարված առաջարկությունները, մշակված մոտեցումներն ու մեթոդները կարող են գործնական կիրառություն գտնել սննդարդյունաբերության ոլորտում՝ նպաստելով իրացվելիության վերլուծության բարելավմանը:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն է հանդիսացել Արցախի Հանրապետության սննդի արդյունաբերության կազմակերպությունների իրացվելիության ֆինանսական կառավարման բարելավման ուղիների մշակումը, որը հեղինակը ներկայացրել է հետևյալ 4 հետերով՝

➤ սննդարդյունաբերության կազմակերպությունների ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծության արդյունքում մեկնաբանվել են ոլորտում առկա ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները, որի հիման վրա առաջարկվել են իրացվելիության ֆինանսական կառավարման մեթոդաբնական մոտեցումներ,

➤ տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և իրացվելիության փոխկապակցված գնահատումների հիման վրա բացահայտվել է, որ դրամական միջոցների շրջանառության արագացման հիման վրա ապահովելով շահութաբերության և ներդրումային գրավչության աճի միտումներ, միաժամանակ մեծանում է իրացվելիության ռիսկը, ինչը ստեղծում է կարճաժամկետ պարտավորությունների մարման անկարողության և անվճարունակության ձևավորման էական ռիսկեր:

➤ մշակվել է տնտեսության իրական հատվածի կազմակերպությունների իրացվելիության ցուցանիշների և ֆինանսական ռիսկի փոխկապակցման ֆինանսական կառավարման համակարգ՝ գործոնային գնահատումների միջոցով հնարավորություն ստեղծելով հավասարակշռել ֆինանսական լծակի և ակտիվների իրացվելիության ազդեցության մակարդակները, և կառավարել ֆինանսական պաշարների ապահովվածությունը,

➤ ռեգրեսիոն վերլուծությամբ բացահայտվել են իրացվելիության և գործարար ակտիվության ցուցանիշների միջև սերտ փոխկապակցվածություններ, որով հնարավորություն է ստեղծվում կիրառել ֆինանսական ռիսկերի կառավարման արդյունավետ գործիքներ, և իրականացնել իրացվելիության պաշարի ապահովվածության հիմնավոր գնահատումներ:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել են հետևյալները.

1. Ատենախոսության մեջ տեսականորեն ներկայացվել են իրացվելիության վերլուծության տարբեր մեթոդներ և մոտեցումներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կիրառվել ատենախոսի կողմից վերլուծվող կազմակերպություններում: Արդյունքները անշուշտ կշահեին, եթե իրականացվեր նաև համեմատական վերլուծությունը ուսումնասիրված տարբեր մեթոդների կիրառմամբ (ցանկալի էր նշված կազմակերպությունների տվյալներով) և հիմնավորվեր տարբեր մոտեցումներով հաշվարկվող ցուցանիշների համադրելիությունը:

2. Ատենախոսն իր գիտական նորույթի առաջին կետը ներկայացնելիս նշում է, որ մեկնաբանվել են ակտիվների իրացվելիության մակարդակի ձևավորման առանձնահատկությունները և առաջարկվել են իրացվելիության կառավարման մեթոդաբանական մոտեցումներ, սակայն, մեր կարծիքով, նշված ձևով բացահայտված չէ, թե կոնկրետ ի՞նչ մոտեցումներ են դրանք, արդյո՞ք դրանք նորովի են ներկայացված: Այդ իմաստով անհրաժեշտություն է զգացվում առավել հստակեցնել նորույթի այդ կետը, ինչպես նաև «ակտիվների իրացվելիություն» և «կազմակերպության իրացվելիություն» հասկացությունները:

3. Հեղինակի կողմից տարբեր մոտեցումներով իրականացվել է իրացվելիության բավականին հաջողված վերլուծություն, հատկապես «Լուսակերտ» ՍՊԸ օրինակով, սակայն ինչ վերաբերում է կոնկրետ իրավցելիության կառավարմանը՝ ցանկալի կլիներ, որ ըստ թեմայի տրամաբանության, առավել խորությամբ ներկայացվեին նաև համապատասխան կառավարչական լուծումները: Մասնավորապես, նշվեին այն ընթացակարգերը, որոնք ֆինանսական կառավարիչները պետք է իրականացնեն իրացվելիության վերաբերյալ ստացված վերլուծական տեղեկատվության հիման վրա. կոնկրետ ի՞նչ կառավարչական որոշումներ կայացվեն, ինչպե՞ս ապահովեն դրանց իրականացումը և վերահսկողությունը:

4. Միաժամանակ նորույթի երկրորդ կետը կշահեր, եթե դրամական միջոցների շրջանառելիության և ներդրումային գրավչության կապը նշելու հետ մեկտեղ, ցույց տրվեր,

թե ինչ առանձնահատկություն է բացահայտվել կոնկրետ ուսումնասիրվող կազմակերպությունում և դա ինչպես է հնարավոր օգտագործել իրացվելիության նորովի կառավարման գործում: Դա վերաբերում է նաև հեղինակի կողմից նշված իրացվելիության ռիսկի մեծացմանը, որի մեղման ուղղությամբ ևս ցանկալի էր վերլուծությունը խորացնել:

5. Ատենախոսը 1.2 ենթագլխում ներկայացնում է վճարունակության և իրացվելիության գնահատման հիմնական գործակիցներն ու ցուցանիշները, սակայն երկրորդ գլխի և 3.3 ենթագլխի շարադրանքում կրկին ցուցանիշների վերաբերյալ տեսական բնույթի մեջբերումների ենք հանդիպում:

6. Շարադրանքում հեղինակը օգտագործում է «իրացվելիության ժամանակակից մոտեցում» հասկացությունը. 23 հավելվածի հիման վրա 2.2 պարագրաֆում վերլուծություն է կատարում, սակայն հստակ չէ, ի՞նչ է նշանակում «ժամանակից մոտեցում», ո՞րն է համարվում «ժամանակակից», ո՞րը՝ «հնացած»: Միաժամանակ հոդինակը «ժամանակակից մոտեցումները» դասակարգում է ըստ հեղինակների՝ Բայադյանի, Եֆիմաովայի, Էյխլերի և Վան Խորնի, սակայն բոլոր այդ հեղինակները իրացվելիության գնահատումը, մեր կարծիքով, կատարում են ըստ էության նույն կամ նման մեթոդաբանությամբ և համանման գործակիցների օգնությամբ, և այդ հանգամանքը լրացուցիչ մեկնաբանման կարիք ունի:

7. Էջ 84-ում՝ աղյուսակ 2.2.12-ում, բերվում է իրացվելիության նորմատիվային արժեքի հաշվարկ, սակայն մեր կարծիքով նորմատիվները չեն հաշվարկվում, այլ դրանց սահմանաչափը տրվում են կիրառվող մեթոդաբանության մեջ, որի մասին նշված է նաև հեղինակի 23 հավելվածում: Իսկ վերլուծության արդյունքում, կարելի է գնահատել, թե արդյո՞ք այդ նորմատիվները պահպանված են, թե՛ ոչ, և եթե կան շեղումներ, ապա՝ բացահայտել դրանց պատճառները և տալ շեղումների վերաբերյալ կառավարչական լուծումներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողություններով, ինչպես նաև ատենախոսության դրական արժանիքներով և գիտական մակարդակով հանդերձ՝ **Գոհար Գավրուշի Սարգսյանի «Իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում (Արցախի Հանրապետության սննդի**

արտադրության կազմակերպությունների նյութերով)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են սննդի արտադրության, կազմակերպությունների ֆինանսական կառավարմանն ուղղված տեսական և գործնական կառուցողական ունեցող խնդիրներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորոյթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության առանձին դրույթներ քննարկվել և արժանացել են հավանության Արցախի պետական համալսարանի ֆինանսահաշվային ամբիոնում, ՀՈՒՄԿ հիմնադրամի գիտաժողովներում, իսկ հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով վեց գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատարակման պահին ընդունելի հանդեսներում ու ժաղավաճումներում: Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան, համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Գոհար Գավրուշի Սարգսյանի «Իրացվելիության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները տնտեսության իրական հատվածի կազմակերպություններում (Արցախի Հանրապետության սննդի արտադրության կազմակերպությունների նյութերով)» թեմայով պաշտպանության ներկայացված ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում»** մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ա.Ա. Հակոբյան

15 ապրիլի 2022թ.

Ա.Ա.Հակոբյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար



Ե.Վ. Դարբինյան